ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

ՔՈՉԱՐՅԱՆ Տ. Տ.

Եթե ԵԱՀԿ-ի ու ԵՄ-ի դեպքում ինտեգրումը լուրջ վեճերի առիթ չէ, ապա նույնը չի կարելի ասել ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների մասին: Ամեն մի պարագայում ԵԱՀԿ-ի, ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի և մյուս միջազգային կառույցների հետ համագործակցությունը առաջնահերթ ծառայում է անցումային փուլում գտնվող հանրապետության և հասարակության առջև ծառացած ինչպես արտաքին, այնպես էլ ներքին սպառնալիքների ու մարտահրավերների չեզոքացմանն ու հաղթահարմանը: Եթե այդ համագործակցությունը չի ծառայում իր այս հիմնական նպատակին, ապա այն կարելի է համարել բովանդակությունից զուրկ ձևական երևույթ, որը միտված է գործընկերության պատրանք ստեղծելուն:

Հայաստանի և եվրոպական անվտանգության կառույցների ինտեգրման արդյունքներն ու նաև հեռանկարներն ուսումնասիրելու տեսանկյունից որպես ուղեցույց կարող են ծառայել 2007 թվականին ընդունված ՀՀ կարևորագույն դոկտրինալ փաստաթղթերը, մասնավորապես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը» և «ՀՀ ռազմական դոկտրինը»: Երկուսն էլ ՀՀ անվտանգության միջավայրի դինամիկայի պատշաճ գնահատման նախադրյալներ են ստեղծում: Ինչպես Հ. Քոթանջյանն է նշում, ազգային անվտանգության ռազմավարությունը փորձաքննություն անցել է Եվրոպայի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի առաջատար մասնագիտական կենտրոններում, որոնց հետ «մեթոդաբանական համագործակցության նման ոչ տրիվիալ ձևաչափը փորձարկվել է որպես անվտանգության բնագավառում Հայաստանի և գործընկերների ազգային շահերի զգայուն կողմերին վերաբերող, ընդսմին՝ ոչ թե զուտ քաղաքական, այլ կերպափոխված՝ ակադեմիական ձև ստացած կողմնորոշիչ ազդակների ու գաղափարների փոխանակման ռազմավարորեն արդյունավետ կապուղի, որը Հայաստանի համար նորություն էր: Հարկ է նշել այն ըմբռնումն ու հարգանքը, որոնք դրսևորեցին Մոսկվայի, Վաշինգտոնի և Բրյուսելի գործընկերները գլխավոր ազգային քաղաքական փաստաթղթի բովանդակությունը ինքնուրույնաբար մշակելու իրավունքի և կամքի նկատմամբ»[1]: Ուստի հիշյալ փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրությունը յուրօրինակ վերլուծական «բանալի» է, որը թույլ է տալիս պատկերացում կազմել

[1] **Քոթանջյան Հ.,** *Հայաստանի Հանրապետության ազգային շահերի ապահովման հեռանկարները համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման համատեքստում (Հայկական բանակ, 4 (62), 2009, էջ 45-46):*

հարափոփոխ անվտանգության միջավայրում ՀՀ-ի կայուն գերակայությունների մասին, ներառյալ՝ եվրոպական անվտանգության կառույցների հետ համագործակցությունը:

Թեպետ ազգային անվտանգության ռազմավարությունը (ԱԱՌ)[2] երկրին սպառնացող վտանգները բաժանում է երկու խմբի՝ արտաքին և ներքին սպառնալիքներ (ըստ որում, արտաքին սպառնալիքներն էլ ենթաբաժանվում են արտատարածաշրջանային և ներտարածաշրջանային խմբերի), այդուհանդերձ, պետք չէ մոռանալ, որ ժամանակակից աշխարհում նման բաժանումները պայմանական բնույթ են կրում, և որ սպառնալիքների այդ երկու խմբերը սերտորեն փոխկապված են ու նպաստում են մեկը մյուսի ծագմանը կամ սաստկացմանը: Պատահական չէ, ուրեմն, որ միջազգային կառույցները ներգրավված են ոչ միայն արտաքին մարտահրավերների ազդեցության մեղմացմանն ուղղված միջոցառումներում, այլև ջանքեր չեն խնայում ներքին համարվող սպառնալիքների վերացման համար:

Ըստ ԱԱՌ-ի (որը, ի դեպ, մշակվել է Հայաստանի միջազգային գործընկերների օգնությամբ)՝ Հայաստանի արտաքին անվտանգության ռազմավարության հիմնական սկզբունքները փոխլրացումն ու ներգրավվածությունն են: ՀՀ արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունն իրականացվում է երեք ուղղություններով՝ միջազգային, տարածաշրջանային և համահայկական: ԵՍՀԿ-ի, ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունները պատկանում են միջազգային ուղղությանը: ՀՀ միջազգային ներգրավման ռազմավարության մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում մասնակցությունը համընդհանուր նշանակության ծրագրերին, մասնավորապես միջազգային ահաբեկչության դեմ պայքարին և խաղաղապահ գործողություններին և սպառազինությունների վերահսկման ռեժիմներին, ակտիվ ներգրավվածությունը միջազգային կարևորագույն կազմակերպություններում, համաշխարհային ուժային կենտրոնների և տարածաշրջանային գործընթացներում ներգրավված երկրների հետ փոխհարաբերությունների զարգացումը և մասնակցությունը Եվրոպայում և հետխորհրդային տարածքում ընթացող ինտեգրման գործընթացներին: Այս ամենը, իհարկե, համընդգրկուն ճաշացանկի տպավորություն է թողնում: Թղթի վրա, համենայն դեպս, պաշտոնական Երևանը ամեն ինչ արձանագրել է այնպես, ինչպես պետք է լինի (իմա՝ այնպես, որ միջազգային գործընկերներից ոչ մեկը դրժգոհ չմնա ՀՀ օրակարգից):

Քննարկելով արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչները՝ ԱԱՌ-ում նշվում է, որ ՀՀ անվտանգության ապահովմանն են ուղղված ինչպես Հայաստանի ռազմական ոլորտի համագործակցությունն առանձին պետությունների հետ, այնպես էլ անդամակցությունը միջազգային և տարածաշրջանային կազմակեր-

---

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն՝ հաստատված ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով (ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 2007, հ. 11):

պություններին, մասնակցությունը դրանց շրջանակներում իրագործվող միջազգային ծրագրերին: Հայաստանի անվտանգության ռազմաքաղաքական ապահովման հիմնական բաղադրիչներ են հրոչակված ՌԴ-ի հետ երկկողմ ռազմավարական գործընկերային հարաբերությունները, ներառյալ՝ համագործակցությունը պաշտպանական և ռազմատեխնիկական ոլորտում, անդամակցությունը ՀԱՊԿ-ին, երկկողմ ռազմական համագործակցությունը, հատկապես ԱՄՆ-ի և Հունաստանի հետ, համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ, անվտանգության միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ԵԱՀԿ-ի անվտանգության մարմինների գործունեությունը, որոնցով ապահովվում է սպառազինությունների վերահսկման բաց և թափանցիկ ռեժիմը: Փաստորեն, ՆԱՏՕ-ի և ԵԱՀԿ-ի համապատասխան կառույցների հետ հարաբերությունները նշվում են ցանկի վերջում և իրենց կարևորությամբ զիջում են ոչ միայն ՌԴ-ի հետ դաշնակցային հարաբերություններին, այլև ԱՄՆ-ի և Հունաստանի հետ ռազմական փոխգործակցությանը:

ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններին նվիրված մասում Ռազմավարությունը վերահաստատում է Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը, այն է՝ Հայաստանը հետամուտ է Հյուսիսատլանտյան դաշինքի հետ «ակտիվ և արդյունավետ հարաբերությունների զարգացմանը», ընդ որում ԳՀԽ-ին (Գործընկերություն՝ հանուն խաղաղության) ակտիվ մասնակցությունը դիտարկվում է որպես ոչ միայն Դաշինքի հետ պատշաճ կապեր պահպանելու միջոց, այլ նաև ԱՄՆ և դաշնակից այլ պետությունների հետ երկկողմ հարաբերությունների զարգացման, ինչպես նաև Հայաստանի եվրոպական ներգրավման քաղաքականության տեսանկյունից: Ըստ որում, արտաքին անվտանգության երկկողմ ձևաչափը քննարկելիս շեշտադրվում են ԱՄՆ-ի միջնորդական ջանքերը ԼՂ հիմնահարցի կարգավորման գործում, ինչպես նաև ՀՀ համագործակցությունը ԱՄՆ-ի հետ միջազգային ահաբեկչության դեմ պայքարում, խաղաղապահ գործողություններում, միջուկային զենքի չտարածման և համընդհանուր անվտանգության հետ կապված այլ հարցերում: Անդրադառնալով Եվրամիության հետ Հայաստանի կապերի երկարաժամկետ հեռանկարայնությանը՝ Ռազմավարությունն առանձնացնում է այդ կառույցի հետ համագործակցության խորացումը «առևտրատնտեսական կապերի առումով, ինչը նշանակալի գործոն է Հայաստանի տնտեսական զարգացման համար» և «Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման և իրավական պետության կայացման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանու- թյան» տեսանկյունից: Եվրամիությունը բնութագրվում է որպես «քաղաքականության և տնտեսության խոշորագույն ուժային կենտրոններից» մեկը, իսկ դրա հովանու ներքո անցկացվող ծրագրերը՝ որպես «Հարավային Կովկասում հարատև կայունության և համագործակցության մթնոլորտին» նպաստող գործոններ: Քաղաքական և տնտեսական ոլորտներում երկկողմ կապերի ամրապնդումն ու ընդլայնումը շեշտադրվում են նաև Ռազմավարության՝ եվրոպական երկրների հետ երկկողմ հարաբերություններին նվիրված

հատվածում: ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության կարևորությունից բացի, Հայաստանի ԵԱՀԿ անդամակցությանը նշանակություն է տրվում «Եվրոպայի անվտանգության ու կայունության ապահովման, ժողովրդավարական ու իրավական պետության չափանիշների տարածման ուղղությամբ իրականացվող աշխատանքների առումով», որոնցում Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը լրացուցիչ կարևոր գործոն է երկրի անվտանգության և կայունության համար»: Փաստորեն, Ռազմավարությունը սահմանափակվում է գերազանցապես տարբեր միջազգային ամբիոններից պարբերաբար հնչեցվող ՀՀ պաշտոնական դիրքորոշումը կրկնելով, սակայն մեզ համար այստեղ կարևորն այն է, որ, ըստ այս նշանակալից փաստաթղթի, եվրոպական անվտանգության կառույցների հետ ինտեգրումը ընթացել և ընթանալու է աստիճանական տեմպերով, և հստակ է, որ առաջիկայում Հայաստանը չի պատրաստվում որևէ քայլ կատարել ՆԱՏՕ-ին անդամակցության ուղղությամբ, իսկ Եվրամիությանն անդամակցությունը շարունակում է մնալ երկարաժամկետ նպատակ:

Եվրոպական անվտանգության կազմակերպությունների հետ ռազմաքաղաքական ոլորտում համագործակցության զարգացման պաշտոնական Երևանի մտադրությունների մասին վկայող մեկ այլ կարևոր փաստաթուղթ է Հայաստանի ռազմական դոկտրինը (2007 թ.)[3]: Միջազգային ռազմական և ռազմատեխնիկական համագործակցությանը նվիրված գլխում նշվում է, որ ՀՀ-ն այդ ոլորտներում միջազգային համագործակցություն իրականացնում է ազգային անվտանգության հիմնարար արժեքների, ռազմական անվտանգության ապահովման խնդիրների և միջազգային անվտանգությանը նպաստելու նկատառումներով: Միջազգային ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության գերակա ուղղությունների շարքում, ՌԴ-ի հետ ռազմավարական համագործակցությունից և ՀԱՊԿ ծրագրերին ակտիվ մասնակցությունից զատ, առանձնացվում են երկկողմ ռազմական համագործակցության զարգացումը ԱՄՆ-ի (բարեփոխումների իրականացման, փոխգործակցելի ստորաբաժանումների ստեղծման, միջազգային կայունացման և խաղաղապահ գործողություններին մասնակցության ուղղությամբ), ՆԱՏՕ-ի և նրա անդամ պետությունների հետ (այս կետը գրեթե նույնությամբ կրկնում է ԱԱՌ-ի համապատասխան հատվածը) և ԵԱՀԿ-ի շրջանակներում՝ հատկապես սպառազինությունների վերահսկման բնագավառում: Հատկանշական է, որ Եվրամիության հետ համագործակցությունը Ռազմական դոկտրինի շրջանակներում չի շոշափվում: Եվրամիությունը Հայաստանում որպես ռազմական ոլորտի դերակատար չի ներկայանում և համապատասխանաբար չի էլ ընկալվում:

Եվրոպական անվտանգության կառույցների հետ ինտեգրումը քննարկելիս շատ հաճախ առաջին պլան է մղվում Հայաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու բավական վիճահարույց հարցը: Թեպետ պաշտոնական մակարդակով բազմիցս նշվել է, որ

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին, հաստատված ՀՀ Նախագահի 2007 թ. դեկտեմբերի 25-ի ՆՀ-308-Ն հրամանագրով (ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Ե., 2008, հ. 1):

Հայաստանը նման որևէ մտադրություն չունի, այդուհանդերձ, թեման շարունակում է հուզել հայաստանցի և օտարերկրացի միջազգայնագետներին ու քաղաքագետներին: ՆԱՏՕ-ին անդամակցելը բխում է Հայաստանի երկարաժամկետ շահերից, և որ ժամանակի ընթացքում և համապատասխան պայմանների առկայության (խոսքն առաջին հերթին ԼՂ հակամարտության կարգավորման մասին է) դեպքում Հայաստանը, Վրաստանի ու մասամբ նաև Ադրբեջանի օրինակով, կփոխի իր վերաբերմունքը այս խնդրի նկատմամբ ու ավելի սերտ հարաբերություններ կկառուցի Հյուսիսատլանտյան դաշինքի հետ: Միաժամանակ, Հայաստանի ազգային շահերից չի բխում Ռուսաստանի գլխավորած անվտանգության համակարգի ծիրից դուրս գալը, և որ Հայաստանը, հաշվի առնելով պատմության դասերը և իր աշխարհագրական հարևանության առանձնահատկությունները, «դատապարտված» է մնալ Ռուսաստանի միակ իրական դաշնակիցը տարածաշրջանում, որին Մոսկվան երբևէ թույլ չի տա մուտք գործել ՆԱՏՕ:

Ինչ-որ չափով ծայրահեղ այս մոտեցումները մի կողմ թողնելով միայն՝ հնարավոր է անաչառ վերլուծել Հայաստանի՝ ՆԱՏՕ-ին լիարժեք ինտեգրվելու հեռանկարը: Հայաստան–ՆԱՏՕ հարաբերություններին նվիրված պաշտոնական հռետորաբանությունը միշտ ավելի դրական լույսի ներքո է ներկայացրել իրերի դրությունը, քան այն իրականում եղել է: Հատկապես 90-ականներին հայկական կողմի քայլերն ավելի շատ հռչակագրային բնույթ էին կրում: Սակայն արդեն 2000-ականներին Հայաստան–ՆԱՏՕ գործակցությունը առավել առարկայական է դառնում՝ պայմանավորված ոչ միայն ՀՀ-ի ցանկությամբ, այլև Դաշինքի որդեգրած նոր քաղաքականությամբ, որն ուղղված է Հարավային Կովկասն իր ռազմավարական շահերի շրջանակի մեջ վերցնելուն և տարածաշրջանի պետությունների հետ անհատական կապերը զարգացնելուն:

Այս կապակցությամբ հարկ է առաջնահերթ նշել, որ Հարավային Կովկասի երեք ճանաչված պետություններից յուրաքանչյուրի մոտեցումներն ու հանձնառությունները ՆԱՏՕ-ի հանդեպ կարելի է բացատրել՝ ելնելով այն չլուծված խնդիրներից, որ ծառացած են նրանց առջև, այդ թվում՝ ժողովրդավարական պետության կայացման (իր բոլոր բաղադրիչներով հանդերձ), ազգային փոքրամասնությունների և սահմանների անվտանգության հարցերից: Բացի այդ, ՆԱՏՕ-ն Հարավկովկասյան տարածաշրջանում բավական երկար ժամանակ հակասական կերպար է ունեցել: Մասնավորապես՝ կազմակերպության սառը պատերազմի պրիզմայով ընկալումից զատ, Թուրքիայի անդամակցությունը Դաշինքին և վերջինիս ռազմական ակտիվությունը Մերձավոր և Միջին Արևելքում իր հետքն է թողնում Դաշինքի հեղինակության վրա:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ակնհայտ է, որ նրա համար անընդունելի են իր անվտանգության հետ կապված՝ երրորդ երկրներում մշակված և/կամ երրորդ երկրների պարտադրած լուծումները: ՀՀ-ի համար ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների զարգացումը կարծես յուրատեսակ ապահովագրություն լինի, ռազմաքաղաքական

ասպարեզում անցումային փուլի դժվարությունները հաղթահարելու ևս մեկ կարևորագույն արահետ և, իհարկե, նաև բարեփոխումների հարցում լուրջ աջակցության ու գործընկերության աղբյուր: ՆԱՏՕ-ի հետ մերձենալու նպատակը ինքնիշխան ու տարաբնույթ ազդեցություններից անկախ պետության ինքնություն կերտելն է, ոչ թե այդ կառույցին անդամագրվելը:

Հայաստանի անդամությունը ՀԱԿՊ-ին մեծ մասամբ համապատասխանում է երկրի շահերին ու աշխարհաքաղաքական դիրքին, իսկ ՆԱՏՕ-ի հետ խորացող համագործակցությունը գալիս է լրացնելու ՀՀ անվտանգության երաշխիքները: Բնական է, որ շատ ավելի նախընտրելի է, որ տարածաշրջանի բոլոր պետությունները պատկանեն անվտանգության նույն համակարգին, քանի որ լիարժեք անդամակցությունը նույն կառույցներին հնարավորություն կտա առավել արդյունավետ լուծելու տարածաշրջանի առջև ծառացած խնդիրները: Խորհրդային Միության փլուզումից հետո ՀՀ-ն, ըստ էության, չի փոխել իր անվտանգության համակարգը. Վրաստանն ու Ադրբեջանն են հետևողականորեն փորձել հեռանալ նախկին հեգեմոնի ազդեցության ծիրից: Փաստորեն, Հայաստանն իր դիրքորոշումը չի փոխել անվտանգության համակարգի հարցում և ներկայում պարտադրված չի կարող զգալ հետևել իր հարևաններին, եթե իր շահերը դա չեն թելադրում: Հայաստանը գուցե ավելի պատրաստակամ լիներ ՆԱՏՕ-ի անդամության հարցում, եթե համոզված լիներ, որ այդ անդամությունը զերծ կպահեր իրեն հարևան որոշ երկրների ագրեսիվ մտադրություններից, սակայն պատմական փորձը ցույց է տալիս, որ անվտանգության նույն համակարգում գտնվելը միշտ չէ, որ միմյանց դեմ ռազմական գործողություններից հեռու է պահում: Այսինքն, ՆԱՏՕ-ն այս փուլում՝ տարածաշրջանում չկարգավորված հակամարտությունների և հարաբերությունների առկայության պայմաններում, անվտանգության բավարար երաշխիքներ չի կարող ապահովել Հայաստանի համար: Բավական է հիշել Թուրքիայի և Հունաստանի օրինակը: Երկուսն էլ Հյուսիսատլանտյան դաշինքի անդամներ էին, սակայն դա Թուրքիային հետ չպահեց Հյուսիսային Կիպրոսը գրավելուց:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ ՀԱՊԿ-ին անդամությունը նույնպես Հայաստանին լիարժեք անվտանգության երաշխիքներ չի ապահովում: Առայժմ այդօրինակ երաշխիքի դեր, գոնե մասամբ, խաղում են Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունները, սակայն դա էլ, անշուշտ, բավարար չէ: Յուրաքանչյուր ռազմաքաղաքական համագործակցություն, որում Հայաստանը ներգրավվումէ, պետք է ուղղված լինի ՀՀ անվտանգության ամենամեծ երաշխիքի՝ բանակի ամրապնդմանը:

Անկասկած, ՆԱՏՕ-ն, որպես անվտանգության համակարգ, ՀԱԿՊ-ի համեմատ, առավել կայացած ու արդյունավետ է (ինչը չի նշանակում, թե Հյուսիսատլանտյան դաշինքը բարեփոխումների կարիք չունի): Բոլոր դեպքերում, եթե ապագայում Հայաստանը առավել ակտիվ ջանքեր սկսի գործադրել Եվրամիությանն անդամակցելու հարցում, ապա մեր երկրի համար շատ դժվար կլինի պահպանել իր անդամությունը

ՀԱՊԿ-ում: Հայտնի է, որ Եվրամիության և ՆԱՏՕ-ի անդամությունները, պատկերավոր ասած, «ձեռք ձեռքի» են գնում, և առայժմ նման նախադեպ չկա, երբ Եվրամիության անդամ որևէ պետություն, բացի ՆԱՏՕ-ից, որևէ այլ ռազմաքաղաքական դաշինքի պատկանի (չհաշված ԵՄ անդամ մի շարք պետությունների, որոնք պահպանում են չեզոքություն): Հայաստանի համար բարդություններ կարող են առաջանալ նաև այն դեպքում, եթե վերսկսվի և հաջողությամբ ավարտվի ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության գործընթացը, որը ժամանակավորապես առկախվեց 2008 թ. ռուս-վրացական պատերազմի հետևանքով[4]: Պատերազմից մոտ մեկ տարի անց՝ 2009 թ. սեպտեմբերի 15-ին, Թբիլիսիում կայացած ՆԱՏՕ-ի խորհրդի արտագնա նիստի նախօրեին Դաշինքի գլխավոր քարտուղար Յաապ դե Հոոպ Սխեֆերը, անդրադառնալով Վրաստանին անդամակցության գործողությունների ծրագրի (որի մեկնարկն անդամակցության յուրօրինակ «նախերգանք» է) տրամադրման հնարավոր ժամկետներին, վերահաստատել է Դաշինքի դիրքորոշումը. «Ժամկետները կախված կլինեն նրանից, թե ինչպես է Վրաստանը իրականացնում իր պարտավորությունները: Ես չեմ կարող ասել, թե երբ Վրաստանը կանդամակցի Հյուսիսատլանտյան դաշինքին, բայց անպայման կդառնա ՆԱՏՕ-ի անդամ»[5]: Վրաստանին անդամակցության գործողությունների ծրագիր տրամադրելը և ՆԱՏՕ-ին այդ երկրի անդամակցության հեռանկարը Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանը դիտարկում է որպես լուրջ ապակայունացնող գործոն ինչպես ՆԱՏՕ-ի, այնպես էլ ողջ կովկասյան տարածաշրջանի համար: Ու թեև պաշտոնական Երևանը մշտապես հայտարարել է, որ անվտանգության այս կամ այն համակարգին պատկանելը այս կամ այն երկրի ներքին գործն է, այդուհանդերձ, Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելը չի կարող անհետևանք մնալ Հայաստանի համար: Ադրբեջանը թեև Դաշինքին միանալու հարցում առայժմ այնքան հետևողական չէ, որքան Վրաստանը, այդուհանդերձ, նույնպես պահպանում է ՆԱՏՕ-ական վեկտորը, և դա Հայաստանը նույնպես չի կարող հաշվի չառնել: Հավանականությունը մեծ է, որ տարածաշրջանի երկրները ՆԱՏՕ-ին կանդամակցեն ճիշտ այն հերթականությամբ, որով իրականացվեց տարածաշրջանի երկրների անդամակցությունը Եվրոպայի Խորհրդին. սկզբում Դաշինքի կազմում կընդգրկվի

---

[4] *ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վ. Օսկանյանն իր հոդվածներից մեկում այսպես է բնութագրում ռուս-վրացական բախումը. «Թեև պայթյունը Մոսկվայի և Թբիլիսիի միջև երկար կուտակված լարվածության հետևանք էր, սակայն առճակատման ներթաքույց խթանիչը ՆԑՏՕ-ի ընդլայնումն էր: ՆԑՏՕ-ի սահմանները ռուսական սահմանագծերին մոտեցնելու խոսակցություններն իսկ, այն էլ այնպիսի տարածաշրջանում, որը ռազմավարական, պատմական և տնտեսական հսկայական նշանակություն ունի Ռուսաստանի համար, արդեն տագնապալի ազդանշաններ էին»:* **Օսկանյան Վ.,** *Եվրոպային անհրաժեշտ է նոր անվտանգության համակարգ (European Voice, Economist Group, 2.II.2008, էջ 1-2):*

[5] *Տե՛ս «Ազատություն» ռադիոկայանի հայերեն արխիվ, «ՆԑՏՕ-ի խորհրդի արտագնա նիստ՝ Թբիլիսիում», 15.09.2008,* http://www.azatatyun.am/content/article/1597321.html:

Վրաստանը, ապա հրավեր կստանան Ադրբեջանն ու Հայաստանը, որոնք կարծես «շղթայված են իրար՝ ցանկացած միջազգային կազմակերպության հետ հարաբերություններում մեկը մյուսից հետ չմնալու անհրաժեշտության պատճառով»[6]:

Առաջիկա տարիներին Հայաստանի անդամակցության մասին խոսելը պարզապես իրատեսական չէ: Դրան պատրաստ չեն ո՛չ Դաշինքը, ո՛չ էլ Հայաստանը: Լեռնային Ղարաբաղի չկարգավորված հակամարտությունը, Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունները և Իրանի հետ սերտ բարիդրացիական հարաբերությունները պահպանելու հրամայականը թույլ չեն տա Հայաստանին շեղվել ներկայիս արտաքին քաղաքական կուրսից: Միևնույն ժամանակ, առավել հավանական է, որ Հայաստանի արտաքին անվտանգության քաղաքականության մեջ կշարունակի մեծանալ եվրոպական ուղղության դերը, որի կարևորագույն տարրերից մեկը ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունն է: Հաշվի առնելով վերջին տարիներին ՀՀ բարձրագույն ղեկավարության կողմից բազմիցս հնչեցված այն թեզը, որ Հայաստանը չի կարող լինել միայն անվտանգության սպառող և պետք է լինի նաև անվտանգության «մատակարար»՝ կարելի է ակնկալել նաև, որ մեր երկիրը կընդլայնի իր մասնակցությունը ՆԱՏՕ-ի միջազգային խաղաղապահ առաքելություններին և ընդհանրապես կաշխատի ամրապնդել իր խաղաղապահ կարողությունները, ներառյալ՝ միջազգային անվտանգության և կայունության գործողություններին մասնակցելու ունակ արագ արձագանքման կառույցի ձևավորումը և զարգացումը: ՆԱՏՕ–Հայաստան հարաբերությունների զարգացման այս փուլում ռազմական անվտանգության և անվտանգության մյուս բաղադրիչների հարցում Հյուսիսատլանտյան դաշինքի բազմամյա փորձը սեփական զինված ուժերի բազմակողմանի կատարելագործմանը ի սպաս դնելը լավագույն գործելակերպը կարող է լինել: Եթե Հայաստանը պատշաճ տեմպերով իրականացնի զինված ուժերի բարեփոխումները և բարեփոխումների նորանոր իրատեսական նախաձեռնություններով հանդես գա, ապա Հյուսիսատլանտյան դաշինքը միայն կողջունի մեր երկրի ակտիվությունը և կինտենսիվացնի ԱԳԳԾ-ի (Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր) կամ այլ ձևաչափերով մեր երկրին տրամադրվող օգնության ծավալներն ու որակը: Ի մի բերելով ասվածը՝ կարելի է արձանագրել, որ գալիք տարիներին տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրադրության մեջ արմատական փոփոխությունների[7] բացակայության դեպքում ՆԱՏՕ-ին անդամակցության հարցը հազիվ թե մտնի ՀՀ արտաքին և անվտանգության քաղաքականության օրակարգ: Այդ իսկ պատճառով,

---

[6] Հայաստանի անվտանգությունը և եվրաինտեգրումը, Հետաքննող լրագրողների «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի հրատարակություն, Ե., 2007, էջ 89:

[7] Այդպիսի արմատական փոփոխություն կարող են լինել Իրանում բռնի կամ խաղաղ փոփոխությունը, Ռուսաստանում արևմտամետ ուժերի վերադարձը իշխանության կամ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը, վերջինիս օրինակով կարելի է տեսնել, որ այդօրինակ արմատական փոփոխությունների հեռանկարը բավական աղոտ է:

անդամակցության շուրջ ինչ-որ չափով անպտուղ զրույցները առժամանակ մի կողմ թողնելով, պետք է հետևողականորեն շարունակել բարեփոխումների քաղաքականությունը. այսինքն՝ ոչ թե խոսքով, այլ գործով համապատասխանեցնել ՀՀ զինված ուժերը և արտաքին ու ներքին անվտանգության հետ կապված մյուս ինստիտուտները եվրոպական և միջազգային չափանիշներին: Ի տարբերություն ՆԱՏՕ-ին միանալու խնդրի՝ Եվրամիության հետ համագործակցության խորացման հարցը պակաս վիճահարույց է Հայաստանում: Թեև պաշտոնական մակարդակով Հայաստանում հազվադեպ են հնչում Եվրամիությանը Հայաստանի ապագա անդամակցության վերաբերյալ հայտարարություններ, այնուամենայնիվ, անուղղակիորեն այդ մասին խոսել են երկրի բոլոր առանցքային դեմքերը: Սովորաբար անդամակցության հեռանկարը ստանում է «աստիճանական ինտեգրացիա եվրոպական կառույցներին» ձևակերպումը: ԵՄ-ին Հայաստանի անդամակցության հարցը դեռ երկար ժամանակ ենթակա չի լինի քննարկման Բրյուսելում և եվրոպական խոշոր մայրաքաղաքներում, որտեղ առայժմ կարծես ուշքի չեն եկել ԵՄ անդամության ընդլայնման վերջին փուլից: Եվրամիությունը դեռ որոշ ժամանակ զբաղված կլինի իր ներքին խնդիրների կարգավորմամբ, իսկ ընդլայնման համատեքստում հիմնականում ուշադրության կարժանանան Թուրքիան և բալկանյան պետությունները: Ինչ վերաբերում է արևելյան հարևանությանը, ներառյալ՝ Հայաստանը, ապա առայժմ նախկին խորհրդային պետու- թյունների հետ հարաբերությունները կշարունակեն զարգանալ Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության ձևաչափերով:

Եվրամիության հետ Հայաստանի ինտենսիվ զարգացող հարաբերությունները ներառում են հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտները՝ առևտրատնտեսականից մինչև գիտակրթական: Անկախության տարիներին ԵՄ-ի կողմից Հայաստանին ցուցաբերված աջակցությունը նպատակաուղղված է եղել ժողովրդավարական պետության կայացման և շուկայական տնտեսության անցման խնդիրների լուծմանը: Սա երկրի եվրաինտեգրմանն ուղղված նպատակներից մեկն է (այս համատեքստում է անհրաժեշտ դիտարկել նաև ԵՄ խորհրդատվական խմբի գործունեությունը Հայաստանում): Անտարակույս, Եվրամիության հետ մերձեցման ճանապարհին հերթական առանցքային զարգացումը կդառնա վերջին շրջանում ակտիվորեն քննարկվող ասոցացման պայմանագրի կնքումը, որը հնարավորություն կընձեռի խորացնելու ՀՀ–ԵՄ քաղաքական երկխոսությունը և տնտեսական համագործակցությունը: Փաստորեն, ինչպես Հայաստանում, այնպես էլ հարավկովկասյան հարևան պետություններում եվրոպական ինտեգրումը, որի հեռահար ռազմավարական նպատակը անդամակցությունն է ԵՄ-ին, դիտարկվում է երկրի զարգացման համատեքստում, սակայն աչքաթող չի կարելի անել նաև ինտեգրման նշանակությունը անվտանգության ամրապնդման տեսակետից: ԵՄ-ի նման ազդեցիկ միջազգային կառույցին ինտեգրվելը ոչ միայն քաղաքացիների բարեկեցությունը

մեծացնելու, այլև արտաքին անվտանգության երկարաժամկետ ապահովման եղանակ է:

Ռազմական անվտանգության տեսանկյունը բացակայում է ԵՄ–Հայաստան համագործակցության օրակարգից, որն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ ԵՄ-ն տնտեսական ու քաղաքական հսկա է, սակայն ռազմական հարցերում առայժմ թզուկի կարգավիճակում է: Այդուհանդերձ, քաղաքական ասոցացումից և հետագա տնտեսական ինտեգրումից զատ՝ Հայաստանը առաջիկա տարիներին կարող է Եվրամիության հետ համագործակցություն ծավալել նաև վերջինիս անվտանգության և պաշտպանության քաղաքականության շրջանակում: Այս իմաստով Հայաստանի՝ վերջին տարիների ակտիվությունը ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության (ԸԱԱՔ) շրջանակներում ընդունվող դիրքորոշումներին միանալու հարցում լավ սկիզբ է: Բացի այդ, ՀՀ-ն կարող է աշխուժացնել ԵՄ-ի հետ համագործակցությունը XXI դարի համաշխարհային անվտանգության առանցքային մարտահրավերների հաղթահարման շուրջ:

Առաջիկա տարիներին Հայաստանը պետք է ջանա համագործակցել Եվրամիության հետ ոչ միայն արդեն «ավանդական» դարձած առևտրատնտեսական և քաղաքական ոլորտներում, այլև քայլեր կատարի միջազգային անվտանգության հարցերի շուրջ փոխհարաբերությունները խորացնելու ուղղությամբ: Դրանով պաշտոնական Երևանը կբարձրացնի իր հեղինակությունը որպես ԵՄ-ի հուսալի գործընկեր և երկրի անվտանգության ինստիտուտները զարգացնելու ևս մեկ ճանապարհ կբացի: Բնական է, որ ԵՄ-ի հետ ռազմաքաղաքական ոլորտում կապերի զարգացումն իր սահմաններն ունի, քանզի Եվրամիությունը որպես ռազմական անվտանգության ոլորտի դերակատար դեռ շատ հետ է ՆԱՏՕ-ից և վերջինիս այլընտրանք չէ: Այդուհանդերձ, Հայաստանի մերձեցումը Եվրամիությանը պետք է համապարփակ բնույթ կրի և չսահմանափակվի միայն «փափուկ» անվտանգության խնդիրներով:

Առաջիկա տարիներին ԵՄ-ի հետ Հայաստանի հարաբերությունները պայմանավորված կլինեն աշխարհառազմավարական զարգացումներով, որոնցից առավել աչքի ընկնողները Եվրամիության դերի մեծացումն է համաշխարհային քաղաքականության և տնտեսության մեջ (որի համար նախադրյալներ են ստեղծել 2004-2007 թթ. մեծ ընդլայնումը և լիսաբոնյան պայմանագրի վավերացումը), ինչպես նաև այդ կառույցի ակտիվացումը Հարավային Կովկասում: Դրա վկայություններից մեկը Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի ներառումն է եվրաինտեգրման զանազան նախաձեռնություններում: Ըստ էության, ՀՀ որդեգրած եվրաինտեգրման քաղաքականությունը հանրապետության անվտանգության ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկն է:

Տարածաշրջանի երկրների երկարաժամկետ ինտեգրումը ԵՄ-ին կարելի է համարել եվրոպական կանխարգելիչ անվտանգության տարր, քանի որ մեր տարածաշրջանի երկրները առավել կանխատեսելի է դարձնում միմյանց և Եվրոպայի համար: Սակայն,

ինչպես և ՆԱՏՕ-ի դեպքում, ԵՄ-ի հետ կապերի խորացումը և ԵՄ-ի շարքերին անդամագրվելը (որը, ինչպես նշեցինք, սերտորեն փոխկապված է ՆԱՏՕ-ին անդամագրվելու հետ) ինքնին համադարման չէ մեր երկրի համար: Եվրաինտեգրման շնորհիվ արտաքին անվտանգության մարտահրավերները միանգամից չեն անհետանա: Պարզապես, նկատի ունենալով, որ եվրաինտեգրումը ենթադրում է որոշակի ժողովրդավարական և տնտեսական չափորոշիչների որդեգրում և պահպանում, դրական տեղաշարժեր տեղի կունենան ներքին սպառնալիքների չեզոքացման ուղղությամբ, որն էլ իր բարերար ազդեցությունը կթողնի արտաքին սպառնալիքների մեղմացման վրա:

ԵԱՀԿ–Հայաստան հարաբերություններում Հայաստանն արդեն իսկ հասցրել է կառուցել բազմաշերտ համագործակցություն ամենատարբեր ոլորտներում, ներառյալ՝ արտաքին անվտանգության բնագավառը: Ի տարբերություն ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի, որոնց հետ հարաբերություններում ժամանակի ընթացքում կարող է ծագել լիարժեք անդամության հարց, ԵԱՀԿ-ի դեպքում նման խնդիր չկա: Անկախության առաջին տարիներից ի վեր հանդիսանալով ԵԱՀԽ/ԵԱՀԿ լիիրավ անդամ պետություն՝ ՀՀ-ն ժամանակի ընթացքում բազմակողմանիորեն զարգացրել է իր հարաբերությունները այս յուրատիպ կազմակերպության հետ, որը ներառում է անդամներ թե՛ եվրատլանտյան և թե՛ եվրասիական անվտանգության համակարգերից: Առավել արդյունավետ համագործակցության ծավալումը մեծապես կախված է նաև նրանից, թե ԵԱՀԿ-ին կհաջողվի՞ արդյոք դառնալ համաեվրոպական անվտանգության կառույց, թե՞ կշարունակի մնալ երկու հակադիր տեսլականների (ռուսական և արևմտյան) պատանդ՝ այդպես էլ չիրացնելով իր ներուժը:

Վերջին տարիներին ԵԱՀԿ-ն արևմտյան ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող կազմակերպությունից ավելի «հավասարակշռված» աշխարհաքաղաքական գիծ տանող կազմակերպության վերածելու ուղղությամբ Ռուսաստանի վարած քաղաքականությունը որոշ պտուղներ տվել է: Մասնավորապես՝ Ղազախստանի կողմից 2010 թ. ԵԱՀԿ նախագահության ստանձնումը կարելի է դիտարկել հենց ԵԱՀԿ-ի «եվրասիականացման» տեսանկյունից: Փաստորեն, կազմակերպությունն այս քայլով փորձում է ամրապնդել Վիեննայից դեպի արևմուտք և արևելք ընկած երկրների միջև փոխվստահությունն ու փոխըմբռնումը՝ հարմարվելով ժամանակակից իրողություններին, որոնցից մեկը Ռուսաստանի ազդեցության մեծացումն է: Սակայն կազմակերպության արդյունավետությունը և հեղինակությունը կշարունակի անկում ապրել թե՛ Արևմուտքում և թե՛ Արևելքում, եթե հնարավոր չլինի հաղթահարել փոխվստահության՝ գոյություն ունեցող ճգնաժամը, որի համար պատասխանատու են սառը պատերազմի ավարտից հետո չանհետացած իրական և գաղափարական բաժանարար գծերը, որոնցից երկուսը, դժբախտաբար, անցնում են Հայաստանի արևմտյան և արևելյան սահմաններով: 2009 թ. կեսերին մեկնարկած՝ այսպես կոչված «Կորֆուի գործընթացը» ցույց է տվել, որ ԵԱՀԿ անդամ

պետությունների շրջանում համընդհանուր դժգոհություն կա կազմակերպության պատասխանատվության գոտում տիրող իրավիճակից[8]: Սառը պատերազմի ավարտին հաջորդած 20 տարիների ընթացքում Եվրոպան, փաստորեն, նշանակալի հաջողությունների է հասել, սակայն Եվրոպայի միասնականությունը անվտանգության հարցերի շուրջ փոխադարձ անվստահության և աշխարհաքաղաքական ներհակ շահերի պատճառով մնում է չիրագործված:

Փաստորեն, եվրոպական անվտանգության ճարտարապետության հարցում միասնության ձևավորումը բխում է Հայաստանի ազգային շահերից, և Հայաստանը պետք է կարողանա աշխարհի խոշորագույն միջտարածաշրջանային միջկառավարական կառույցների բարեփոխման գործին իր դրական նպաստը բերել, քանի որ այդ կառույցների հովանու ներքո է ընթանում ՀՀ արտաքին անվտանգության կարևորագույն հիմնախնդրի կարգավորման գործընթացը: Չնայած իր սահմանափակ հնարավորություններին՝ Հայաստանը կարող է նաև իր լուման ունենալ եվրոպական անվտանգության ճարտարապետության համար նոր շարժիչ ուժ գտնելու գործում:

ИНТЕГРАЦИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
В СИСТЕМУ ЕВРОПЕЙСКОЙ БЕЗОПАСНОСТИ

КОЧАРЯН Т. Т.

Резюме

За последний период Армения сделала очень серьезные шаги на пути интеграции в ведущие европейские структуры в сфере безопасности и обороны. В рамках членства или тесного сотрудничества республике удалось накопить значительный опыт взаимодействия с ОБСЕ, НАТО и ЕС, наладить регулярные механизмы общения, которые создали прочную основу для дальнейшего развития отношений. Углубление европейской направленности внешней политики Армении предполагает увеличение объема интеграции с указанными структурами.

---

[8] *Տե՛ս Выступление Госсекретаря-министра иностранных дел Казахстана К. Б. Саудабаева в “Атлантическом совете” на тему “Геополитика в Евразии”, 3 февраля 2010 г., Вашингтон, kazakhstan-osce.org/ru/node?page=16, էջ 6: 2009 թ. հունիսի 28-ին հունական Կորֆու կղզում ավարտվեց ԵԱՀԿ մասնակից պետությունների արտաքին գործերի նախարարների երկօրյա ոչ պաշտոնական նիստը, որի ընթացքում որոշվեց սկսել «Կորֆուի գործընթացը»՝ նպատակ ունենալով միասնական մոտեցումներ ձևավորել եվրոպական անվտանգության ապագայի շուրջ:*